тов и представлены причины изменения положения за 10 лет. Сделаны выводы и предложения для преодоления основных вызовов экономики и повышения показателей конкурентоспособности.

NANE GRIGORYAN

ANALYSIS OF GLOBAL COMPETITIVENESS INDICATORS OF RA

Key words: indicator of competitiveness, economic growth, progress, competitiveness of the RA.

The article describes the position of the Republic of Armenia in the Global Competitiveness Report. The indicators of 12 pillars of competitiveness were touched upon and the reasons for the change in the situation over 10 years were presented. Conclusions and proposals were made to overcome the main challenges of the economy and increase competitiveness indicators.

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ
Զբոսաշրջության կառավարում, բակալավրիատ, 4-րդ կուրս

ՎՐԱՍՏԱՆ. ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ

Հիմնաբառեր. *զբոսաշրջություն, զբոսաշրջային մուտքեր, հյուրանոցային արդյունաբերություն, ժամանումներ, ռազմավարություն, ներդրումներ*

Այսօր զբոսաշրջության ոլորտն իր ենթակառուցվածքներով կարևոր տեղ է զբաղեցնում շատ երկրների տնտեսության մեջ: Հոդվածում ներկայացվում է Վրաստանի զբոսաշրջության դերը և նշանակությունը, վերլուծվում են զբոսաշրջության զարգացման շարժընթացը, ծառայությունների ոլորտը, քննարկվում են զարգացման հիմնական քայլերը:

Այսօր զբոսաշրջության ոլորտը խոշորագույն արդյունաբերություններից մեկն է, որն ունի համաշխարհային տնտեսական մեծ ներուժ: Վրաստանի տնտեսության մեջ այն նշանակալի դեր ունի ապրանքների և ծառայությունների արտադրության առումով: Երկրի կառավարությունը զբոսաշրջությունը սահմանել է որպես զարգացման հիմնական ոլորտներից մեկը և օրեցօր մեծացնում է ջանքերը: Վրաստանի Ազգային զբոսաշրջության վարչությունը մշակել է գովազդային արշավներ՝ ներքին և միջազգային շուկաներում և ակտիվորեն մասնակցում է միջազգային զբոսաշրջային տոնավաճառներին: Նպատակ ունենալով շարունակել զբոսաշրջության ոլորտի դրական զարգացումը՝ Վրաստանում կատարվել են արմատական բարեփոխումներ: Կառավարությունը հայտարարել է, որ նպատակ ունի առաջնահերթ դարձնել ենթակառուցվածքների զարգացումը:

Վերջին տասնամյակում ԱՊՀ և Մերձավոր Արևելքի այցելուների համար Վրաստանը քիչ հայտնի վայրից վերածվեց մրցակցային տարածաշրջանային զբոսավայրի, որը մեծ հեռանկար ունի՝ ավելի շատ զբոսաշրջիկներ ներգրավելու Եվրոպայից ու Ասիայից: Բարեփոխումների ալիքը սկսվեց 2003 թ., երբ բարձր հանցագործ և կոռուպցիոն երկիրը դարձավ աշխարհում ամենա-

ցածր կոռուպցիոն և Արևելյան Եվրոպայի ամենաապահով երկրներից մեկը: Նաև զանգվածային ներդրումներ կատարվեցին զբոսաշրջային ենթակառուցվածքներում, PR ակցիաներ CNN-ով, Euronews-ով և այլ առաջատար արևմտյան ալիքներով՝ Վրաստանը ներկայացնելով որպես գրավիչ զբոսաշրջային վայր: Ջանքերն արդյունավետ եղան. միջազգային այցելուների քանակը 2003 թ. 0.3 միլիոնից 2017 թ. հասավ 7.6 միլիոնի:

Զբոսաշրջության կայուն աճը դարձել է արժույթի ներհոսքի հուսալի աղբյուր: Վրաստանում զբոսաշրջությունից ստացած ընդհանուր մուտքերը 2016 թ. կազմել են 2.2 մլրդ դոլար: Ըստ Վրաստանի Ազգային բանկի նախնական հաշվարկների՝ միջազգային զբոսաշրջությունից մուտքերը, նախորդ տարվա համեմատ, աճել են 27%-ով՝ 2017 ֆինանսական տարում հասնելով 2.7 մլրդ դոլարի:



Գծապատկեր 1. ***Վրաստանի զբոսաշրջային մուտքերը, մլրդ դոլար***[1]

Բացի դրանից, զբոսաշրջության ոլորտը ստանում է շատ օտարերկրյա ուղղակի ներդրումներ (ՕՈՒՆ). 2013-2017 թթ. այն կազմել է 414 մլն դոլար (ընդհանուր ՕՈՒՆ-երի 5.2%-ը):



Գծապատկեր 2. ***Հյուրանոցային արդյունաբերության մեջ ՕՈՒՆ-եր, մլն դոլար***[2]

[1] Տե՛ս Վրաստանի Զբոսաշրջության ազգային վարչության պաշտոնական կայքէջ http://www.gnta.ge:

[2] Տե՛ս նույն տեղը:

Զբոսաշրջությունը դարձել է Վրաստանի տնտեսության առանցքային ուղղությունը: 2016 թ. այս ոլորտի ծառայությունները կազմել են ընդհանուր տնտեսական արդյունքի 7.2%-ը: 2017 թ. առաջին 9 ամսվա ընթացքում զբոսաշրջության արժեքը ավելացել է 11.5%-ով՝ մինչև 1,5 մլրդ լարի և կազմել է ՀՆԱ 7%-ը:



Գծապատկեր 3. ***Զբոսաշրջության հետ կապված ծառայությունների արդյունքը, մլրդ լարի***[1]



Գծապատկեր 4. ***Զբոսաշրջության հետ կապված ծառայությունների բաշխում, 2016 թ.***[2]

Վրաստանը միջազգային այցելուների թվով ունի աշխարհում ամենաբարձր ցուցանիշներից մեկը: 2007 թվականից օտարերկրյա ժամանողների թիվը տարեկան աճել է՝ 2017 թ. հասնելով 7,6 միլիոնի: Այցելուների ներհոսքը վերջին շրջանում տեղի ունեցած ցնցումների ընթացքում համեմատաբար կայուն է եղել: 2014 թ. աճի տեմպը դանդաղել է, սակայն դրական է մնացել՝ կազմելով 2,3%, որից հետո սկսել է աճել (2017 թ.՝ 19%):

[1] Տե՛ս Վրաստանի Զբոսաշրջության ազգային վարչության պաշտոնական կայքէջ http://www.gnta.ge:

[2] Տե՛ս Վրաստանի Ազգային վիճակագրական գրասենյակի պաշտոնական կայքէջ http://www.geostat.ge:



Գծապատկեր 5. ***Վրաստան ժամանումների թիվը, մլն մարդ***[1]

Զբոսաշրջիկները Վրաստան են այցելում հիմնականում հարևան երկրներից՝ Հայաստան, Ադրբեջան, Թուրքիա և Ռուսաստան, որոնք կազմում են ընդհանուր ժամանողների 80%-ը: Հատկապես վերջերս ստորագրված Ասոցացման համաձայնագրի և մուտքի արտոնագրերի ազատականացումից հետո աճ է սպասվում Ռուսաստանից, Մերձավոր Արևելքից և Եվրամիությունից: Չորս առաջատար շուկաներից Ռուսաստանը գտնվում է առաջին տեղում (նախորդ տարվա համեմատ +34,1%), իսկ Հայաստանը (նախորդ տարվա համեմատ +14,8%) և Ադրբեջանը (նախորդ տարվա համեմատ +11,2%) նույնպես արձանագրեցին երկնիշ թվով աճի տեմպ: Թուրքիայից ժամանած այցելուների աճը նախորդ տարվա համեմատ կազմում է -0,8%:



Գծապատկեր 6. ***Վրաստան այցելողների բնակության երկրների կազմը, 2017 թ.***[2]

Վրաստանի համար հիմնական մարտահրավերն այն է, որ այցելուները երկրում մնան ավելի քան 24 ժամ: 2017 թ. ընդհանուր ժամանումների աճը եղել է հիմնականում տարանցիկ (1321344-ից դարձել է 1687289) և 24 ժամից ավելի (2720970-ից՝ 3478932) մնացող զբոսաշրջիկների հաշվին, իսկ մինչև 24 ժամ (2318189-ից՝ 2388715) մնացող զբոսաշրջիկների թիվն աճել է ըն-

[1] Տե՛ս Վրաստանի Ազգային վիճակագրական գրասենյակի պաշտոնական կայքէջ http://www.geostat.ge:

[2] Տե՛ս Վրաստանի Զբոսաշրջության ազգային վարչության պաշտոնական կայքէջ http://www.gnta.ge:

դամենը 3%-ով: Այցելուները, որոնք երկրում մնացել են 24 ժամից ավելի, ընդհանուր ժամանողների թվում կազմում են 46% և հյուրընկալության ոլորտի եկամտի ամենամեծ աղբյուրն են:[1]

Վրաստանը մեծ ներուժ ունի գրավելու ԵՄ-ի, Ռուսաստանի և Մերձավոր Արևելքի շատ ծախսեր կատարող այցելուների: Վերջին տասնամյակում այս շրջանները տպավորիչ աճ են արձանագրել զբոսաշրջիկների թվով և եկամուտների ներհոսքերով: Դրական ազդեցություն կունենան նաև հետևյալ գործոնները՝

- ԵՄ-Վրաստան ասոցացման համաձայնագիրը և վիզաների ազատականացումը նախատեսում են բարձրացնել երկկողմ տնտեսական գործունեությունը, ինչը կխթանի ԵՄ-ից ժամանողների թվի աճին,
- Վրաստանի կառավարությունը ակտիվորեն աջակցում է ոլորտի զարգացմանը՝ երկիրը որպես զբոսաշրջային ուղղություն տարածելու և MICE հատվածի զարգացմանն աջակցելու միջոցով: Կառավարությունը և զբոսաշրջության ազգային վարչությունը ներդրումներ են կատարում գովազդի և բրենդավորման մեջ, որպեսզի Վրաստանը ճանաչվի Եվրոպայի և Մերձավոր Արևելքի բարձր եկամուտ ունեցող երկրների շարքում: Վրաստանը նաև գովազդներ է տարածում խոշոր միջազգային ալիքներում, ինչպիսիք են CNN-ը և Euronews-ը:
- Զբոսաշրջության ենթակառուցվածքի հետագա ընդլայնումը և նոր հանգստավայրերի զարգացումը կներգրավեն մեծ ծախսեր կատարող այցելուների: Առաջիկա 5 տարիների ընթացքում նախատեսվում է բացել մոտավորապես 3000 նոր հյուրանոցային համարներ, նոր լեռնադահուկային, սպորտային հանգստավայրեր (Մեստիայում, Գոդերձիում) և առողջարաններ (Ցխալտուբոյում, Սաիրմեյում):

Սպասվում է, որ Վրաստան ժամանողների թվաքանակը զգալիորեն կմեծանա, մասնավորապես՝ կառավարության և Վրաստանի ազգային զբոսաշրջության վարչության (GNTA) տարաբնույթ քայլերի շնորհիվ: Այս առումով պետք է նշել, որ վերջերս մշակված «Վրաստանի զբոսաշրջության ռազմավարություն–2025»-ի հիմնական նպատակներից է զբոսաշրջությունից ավելի շատ տնտեսական օգուտների ստացումը: Վրաստանի ազգային զբոսաշրջության վարչության կողմից երկրի զբոսաշրջիկների թվաքանակի ավելացմանն ուղղված գործողությունները հետևյալն են՝

- զբոսաշրջային ենթակառուցվածքների զարգացում,
- սպասարկման որակի բարելավում,
- Վրաստանի մասին իրազեկվածության բարձրացում,
- ներքին և միջազգային շուկաներում մարքեթինգային գործունեություն,
- զբոսաշրջային ապրանքի զարգացում:

Վրաստանի կառավարությունը հարկային և կարգավորիչ խթաններ է ներկայացրել հյուրընկալության ոլորտում հավանական ներդրողների համար, որոնք բավարարում են որոշակի իրավական պահանջներ և պատրաստ են ստանձնել ներդրումային պարտավորություններ: Տարբեր ներդրումային նախաձեռնություններ են առաջարկվել, որպեսզի խթանեն ոլորտի զարգացումը, այդ թվում՝

[1] Տե՛ս Georgia's Tourism Sector - Tourism Market Watch _ December 2017:

- Հյուրանոցային ներդրումային նախաձեռնություն, որը ներդրողներին հնարավորություն է տալիս վրացական շուկա մուտք գործել անմիջապես մրցակցային դիրքում՝ առաջարկելով հետևյալ առավելությունները.
  - անշարժ գույքի վայրի հասանելիություն՝ սեփականաշնորհելու միջոցով,
  - սեփականաշնորհված գույքի ընթացիկ շուկայական արժեքի վրա զգալի զեղչերի կիրառում,
  - արտոնյալ պայմաններ քաղաքապետարանների կողմից, օրինակ՝ Թբիլիսիից և մարզային կենտրոններից և այլն:

Վրաստանի Ազատ զբոսաշրջային գոտիների զարգացմանը նպաստող օրենքը ընդունվել է 2010 թ. և առաջարկում է հարկային արտոնություններ: Իրավական և տնտեսական պահանջները կրճատվել են այն ներդրողների համար, որոնք նշանակված զբոսաշրջային տարածքներում կառուցում և գործարկում են հյուրանոցներ: Ներդրողների համար հիմնական առավելությունները ներառում են՝

- եկամտահարկից ազատում մինչև 2026 թ. հունվարի 1-ը,
- գույքահարկից ազատում մինչև 2026 թ. հունվարի 1-ը,
- ազատում շինարարության թույլտվության վճարից և այլն:[1]

Ազատ զբոսաշրջային գոտիները ներդրողներին հատուկ արտոնություններ են տալիս Քոբուլեթիում և Անակլիայում/Գանմուխուրում: Քոբուլեթիում 1-3 մլն դոլար ներդրումներ կատարող ներդրողներին առաջարկում են՝

- անվճար տարածք,
- անվճար հյուրանոցային կառավարման պլան,
- այն հյուրանոցները, որոնք ունեն ավելի քան 100 սենյակ, տրամադրում են անվճար թույլտվություն՝ խաղատան արտոնագիր,
- շահութահարկից և գույքահարկից ազատում 15 տարով և այլն:

- Քոբուլեթիի հաջող մեկնարկից հետո ստեղծվել է Անակլիա/Գանմուխուրի ազատ զբոսաշրջային գոտին: Ներդրողների համար հատուկ փաթեթը ներառում է.
  - անվճար տարածք,
  - անվճար հյուրանոցային կառավարման պլան,
  - շահութահարկից և գույքահարկից ազատում 15 տարով,
  - այն հյուրանոցները, որոնք ունեն ավելի քան 80 սենյակ, անվճար տրամադրում են խաղատան արտոնագիր,
  - Վրաստանի քաղաքացիություն օտարերկրյա ներդրողների համար և այլն:[2]

Այսպիսով, Վրաստանը փորձում է գործի դնել այն բոլոր հնարավոր միջոցները, որոնք արդյունք կապահովեն ինչպես զբոսաշրջության, այնպես էլ դրա ենթակառուցվածքների համար:

---

[1] Տե՛ս Georgia, Hospitality & Tourism Sector Overview, 2016:

[2] Տե՛ս Georgia – Marvelous Land of Tourism, Researches and Reports, 2016, էջ 53:

СОНА ГРИГОРЯН

ГРУЗИЯ. ТУРИЗМ КАК КЛЮЧЕВОЕ НАПРАВЛЕНИЕ ЭКОНОМИКИ

Ключевые слова: *туризм, туристические записи, гостиничный бизнес, прибытие, стратегии, инвестиции.*

Сегодня индустрия туризма с ее инфраструктурой играет важную роль в экономике многих стран. В статье представлены роль и значение туризма в Грузии, проанализированы меры для развития туризма и повышения качества предоставляемых услуг, связанных с туризмом. Обсуждаются основные шаги, предпринятые Грузией для развития туризма.

SONA GRIGORYAN

GEORGIA. TOURISM AS A KEY DIRECTION OF THE ECONOMY

Key words: *tourism, tourist entries, hotel industry, arrivals, strategies, investments.*

Today The tourism industry and its infrastructure play an important role in the economy of many countries. The article presents the role and importance of tourism in Georgia, where have been analyzed the dynamics of tourism development and the results of quality improvement strategy of tourism related services. The main steps in the development of tourism in Georgia are discussed.

ՄԱՐԻԵՏԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ
Բնօգտագործման տնտեսագիտություն, բակալավրիատ, 4-րդ կուրս

ԷԿՈԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Հիմնաբառեր. *էկոզբոսաշրջություն (էկոտուրիզմ), էկոգյուղ, կայուն զարգացում, կանաչ ապրելակերպ, ռեկրեացիոն ռեսուրսներ, երկրորդային ռեսուրսօգտագործում*

Հայաստանն իր առաջին քայլերն է անում զբոսաշրջության ասպարեզում՝ ունենալով այդ ոլորտը զարգացնելու համար բոլոր նախադրյալները՝ հարմար աշխարհագրական դիրք, յուրահատուկ բնություն, պատմամշակութային ավանդույթներ, տեսարժան վայրեր, աշխատուժի ցածր ինքնարժեք, ակտիվ սփյուռք:

Էկոզբոսաշրջության (էկոտուրիզմ) առաջացումն ու զարգացումը պայմանավորված է շրջակա միջավայրի վրա մարդու բացասական ազդեցությունը նվազագույնի հասցնելու ձգտմամբ, որի հիմքում կայուն զարգացման գաղափարախոսությունն է:

Վերջին տասնամյակներում ստեղծված սոցիալական և տնտեսական անբարենպաստ պայմանները հանգեցրել են բնական պաշարների անխնա, երբեմն անմիտ օգտագործմանը, որն էլ իր հերթին բնական համակարգերի ընդհանուր վիճակի վրա անուղղելի հետևանքներ կարող է ունենալ: Դրա հետ մեկտեղ, տնտեսության զարգացմանը զուգընթաց ավելանում են սոցիալական և տնտեսական հիմնախնդիրները, ահաբեկչությունները և շրջակա մի-